

Ս.Գ.Հ.Կ. ԿՈՂՋՈՒՆԵ ՔՍԱՆՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՊՈԼՍՈՅ ՄԵՋ



20' LER
20 Devrimci Ermeni, 15 Haziran 1915

20' LER
ՔսաՆ հայ յեղափոխականներ, 15 յունիս 1915 թ.

Panel Tarihi:
13 Haziran 2013 saat: 19.30
Cezayir Salonu

Ծեղայիր Սրահ
13.յունիս.2013, ժամը՝ 19.30

Konuşmacılar:
Ragıp Zarakolu
Masis Kürkcügil
Mustafa Kahya

Բանախօսներ՝
Ռազզի Զարաբոլու
Մասիս Զիրքբեկիլի
Մուսթաֆա Զահյա

Իրենց նահատակութենէն ճիշդ 98 տարիներ ետք, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կախողան բարձրացած ղեկավարներու՝ Քսաններու ոգին վերստին պիտի վերադառնայ Սուլթան Պալատի հրապարակ եւ Պոլիս, ուր յառաջիկայ օրերուն տեղի կ'ունենան Քսաններու յիշատակին նուիրուած աննախագէյ երկու միջոցառումներ, ներկայութեամբ թուրք, հայ եւ օտար մտաւորականներու, քաղաքական գործիչներու, աքթիւստներու եւ լրատուամիջոցներու:

Ոգեկոչման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Հինգշաբթի, երեկոյեան Պոլսոյ կեդրոնական հատուածի «ձեզայիր» սրահին մէջ: Զեռնարկի ընթացքին խօսքեր կ'արտասանեն հեղինակաւոր իրաւապաշտպան Ռակիփ Զարաբոլուն, Մասիս Քիւրքբեկիլը եւ Մուսթաֆա Քահյան: Կ'արտասանուի նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ողջոյնի ուղերձը: Իսկ Շաբաթ, 15 Յունիս 2013-ի յետմիջօրէին, Պոլսոյ Սուլթան Պալատի հրապարակին վրայ տեղի կ'ունենայ խորհրդանշական հաւաք: Կ'ակընկալուի, որ քսան երիտասարդներ ներկայացնեն Հնչակեան Քսան անմահներու կախողան բարձրանալու տեսարանը: Այս առթիւ, կազմակերպիչ յանձնախումբը Պոլսոյ մէջ նաեւ

հրապարակած է յատուկ աֆիշներ: Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութենէն փոխանցուեցաւ, թէ ձեռնարկներու ծրագրաւորումն ու գործադրութիւնը նախաձեռնութիւնն են Թուրքիոյ մէջ գործող խումբ մը ղեմնկրատական, ազատախոհ եւ մարդկային իրաւանց պաշտպան կազմակերպութիւններու եւ մտաւորականներու: Այս խմբակցութիւնները եւ մտաւորականները, անցնող երեք տարիներու ընթացքին Պոլսոյ մէջ կազմակերպեցին Հայոց Յեղափոխութեան ոգեկոչման միջոցառումներ, ճշնումներու եւ հալածանքներու պայմաններուն տակ:

Այս իրողութենէն ելլելով, Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւնը շրջանէ մը ի վեր յարաբերութեան մէջ մտած էր նշեալ խմբաւորումներուն հետ: Քսաններու յիշատակը ոգեկոչող միջոցառումներու կազմակերպիչ մարմինը «մամլոյ եւ հանրային կարծիքին» ուղղուած յայտարարութիւն մը տարածած է, որուն մէջ մասնաւորապէս կ'ըսուի. «Թուրք ընկերավարականները եւ լուսաւորեալ ղեմնկրատականները պահանջատիրութեան եւ դատի ճշմարտութեան մասին շատ սահմանափակ իմացութիւն ունին: Մինչդեռ անոնք, այս հողերուն վրայ լարուած կախողաններու փայտերուն վրայ,

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԳԵՐԱԳՈՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԵՑ՝ ՉՔՆՆԱՐԿԵԼ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐՈՒ ՓՈԽՅԱՏՈՒՑՄԱՆ ՅԱՐՑԸ

Յունիս 10-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գերագոյն դատարան յայտարարեց, թէ պիտի չքննէ իններորդ շրջանային դատարանի որոշումը, որով չեղեալ նկատուած էր Հայոց ցեղասպանութեան ժառանգորդներու փոխհատուցման իրաւունքի մասին Քալիֆորնիոյ օրէնքը:

Գերագոյն Դատարանի այս քայլով, ստորին ատեանի որոշումը կը մնայ ի գորտ:

2000-ին Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանը օրէնք հաստատած էր, Յեղապանութեան զոհերու իրաւայաջորդներուն առիթ տալով մինչեւ 2013 թուականի աւարտը դատ բանալու ապահովագրական ընկերութիւններու դէմ:

2012-ի Փետրուարին Դաշնակցային Դատարանը 11-0 միաձայն որոշում կայացուց առ այն, որ փոխհատուցման մասին Քալիֆորնիոյ օրէնքը հակասահմանադրական է եւ մուտք կը գործէ արտաքին քաղաքական բնագաւա-

ռէն ներս, որ միայն Դաշնակցային կառավարութեան իրաւասութեան մէջ կ'իյնայ:

Նոյն տարուայ Յունիսին, խումբ մը հայեր, փաստաբան Իգոր Տիմոֆէեւի միջոցաւ դիմած էին Գերագոյն Դատարան՝ որոշումը վերանայելու խնդրանքով:

Քալիֆորնիոյ Ընդհանուր Դատախազ Քամալա Հէրրիս դիմած էր Գերագոյն Դատարանին, որ վերանայի որոշումը: Միւս կողմէ սակայն, նախագահ Օպամայի վարչակազմը հակառակ խնդրանքով դիմած էր նոյն դատարանին:

Գոնկրէսական Ատամ Շիֆ, յայտարարութեամբ մը եկաւ իր յուսախաբութիւնը յայտնելու Գերագոյն Դատարանի որոշումին կապակցութեամբ: Ան յայտնեց որ, Ներկայացուցիչներու Տունէն ներս պիտի ներկայացնէ նոր օրինագիծ մը, որպէսզի առիթ տրուի նահանգներուն՝ պաշտպանելու բոլոր ցեղասպանութիւններու զոհերու իրաւունքները:

ԲԱՑԱՌԻԿ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱՒ ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՅԱՄԵՐԳԸ

Սուրիահայութեան Օժանդակութեան Համագործակցին Մարմնի այս տարուան համերգը եւս պակուեցաւ փայլուն յաջողութեամբ: Նախորդը՝ տեղի ունեցած էր ինը ամիսներ առաջ, արժանաւարով մեծ ընդունելութեան:

Արդարեւ, Հոլիվուտի շքեղ «Տոլլի» սրահը ժամադրավայրը դարձած էր Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութին: Ան՝ Կիրակի Յունիսի 9, 2013, եկած էր զօրակցելու Սուրիոյ հայութեան, որ այս օրերուն կը դիմագրաւէ բազում դժուարութիւններ: Շուրջ 3000 հոգինոց բազմութիւնը եկած էր որպէս «Գիտակից, կարեկից եւ յանձնառու»: Եկած էր մարդկային յոյս, լոյս եւ խաղաղութիւն մեր սուրիահայ ազգակիցներուն:

Այս առթիւ գործադրուեցաւ բացառիկ ճիւղ համերգ մը, մասնակցութեամբ Գէորգեան պարի ուսումնարանի 300 պարողներու եւ հիւր արուեստագէտներ Արմէն ճիւղի, Ռազմիկ Մանսուրեանի, Յարութ Փամպուքճեանի, Յովհաննէս Շահպաղեանի, Ռուբէն Յարութիւնեանի, Անտրէի, Վաչէ Աւետիսի, Արամ Աւագեանի երաժշտանոցի խմբակին: Այս առթիւ ելոյթներ ունեցան նաեւ յատկապէս Երեւանէն ժամանած շնորհալի երգչուհիներ Լէյլա Սարիբեկեանն ու Սիլվա Յակոբեանը, որոնց ինքնուրոյն կատարումներն արժանացան բարձր գնահատականի:

Շուրջ երեք ժամ տեւող սոյն

բարձրորակ համերգին տիրապետող մասը մեր գողտրիկ ու գունագեղ ազգային պարերու գեղեցիկ ու ներդաշնակ իրագործումն էր: Այս բոլորի դափնեպսակը հանդիսացաւ «Յեղապանութիւն» խորագրով գեղարուեստական համադրումը (խօսք Յովհաննէս Շիրազի «Հայոց Տանգէականը», ամուսնուրդ՝ Նունէ Աւետիսեան, մենակատարներ Սոնա եւ Նունէ Գէորգեաններ):

Յաջող իրագործում մըն էր, որուն մէջ առկայ էին խօսքը, երաժշտութիւնն ու պարը: Սոյն յիշատակելի համերգի եզրափակիչ մասը շատ մեծ տպաւորութիւն ձգեց հանդիսականներու վրայ: Տարբեր հասակի եւ տարիքի 300 պարողներ եւ պարուհիներ, իրենց համաչափ քայլերով, ըսել կ'ուզէին սուրիահայութեան «Մենք հոս ենք եւ ձեզի հետ ենք սիրելի ազգակիցներ...»:

Գնահատելի ձեռնարկ մըն էր, որուն համար կը շնորհաւորենք Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմինն ու անոր նուիրեալ ատենապետ՝ Զաւէն Խանճեանն ու իր գործակիցները: Առանձնապէս շնորհաւորելի են նաեւ Գէորգեան պարի ուսումնարանի տնօրէններ Վարդան եւ Սիրանուշ Գէորգեանն ու պարուսույց Սոնա Գէորգեանը:

Վարձքը կատար այս մեծածաւալ գործին աստար հանդիսացող բոլոր արուեստագէտներուն եւ մասնակից համագործակցին մարմնի տասը կազմակերպութիւններուն:

ԹՈՒՐԲ ԼՐԱԳՐՈՂ. ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ՄԱՐԴԻԿ ՎՃՌԱԿԱՆ ԵՆ ԵՒ ԿԱՆԳ ՉԵՆ ԱՌՆԵԼՈՒ

ՄԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ

Ի պաշտպանութիւն Գեգի պուրակի՝ Ստամբուլի թաղամասի հրապարակում շարունակում են ցուցերը: Կատարուող իրադարձութիւնների շուրջ «Լրագիր»-ը գրուցել ենք այս օրերին Հայաստան այցելած թուրք ֆոտոլրագրող Ումուդ Վեդաթի հետ:



Հայաստան այցելող թուրք ֆոտոլրագրող Ումուդ Վեդաթ

- Ումուդ, թուրքիայում Գեգի պուրակում առեւտրի կենտրոն կառուցելու խնդրի շուրջ հազարաւոր քաղաքացիներ են դուրս եկել փողոց, արդեօք արաբական գարնան շո՞ւնչ է նկատուում, թե՞ քաղաքացիական զիտակցութեան զարթոյն է:

- Եթէ համեմատենք թուրք-իայում տեղի ունեցող զարգացումներն արաբական գարնան հետ, ապա արաբական գարնանից այն տարբերում է մի քանի բաղադրիչներով: Նախեւառաջ այստեղ չկայ տնտեսական խնդիր, քանի որ թուրքիան տնտեսապէս հասարակաշուկայէն զարգացում է ապրում: Պարզապէս հանրութիւնը հարիւր տարուայ մէջ առաջին անգամ հասկացաւ, որ ուզում է դէմ գնալ բռնապետութեանը. իննուսուն տարի շարունակ հանրութիւնը քեմալական բռնապետութեան դէմ էր պայքարում, տասը տարի շարունակ փորձում էր դիմակայել իսլամական բռնապետութեանը, իսկ հիմա հասարակութիւնը ոտքի է կանգնել ու դէմ է առհասարակ բռնապետութեանը, ցանկանում է ներգրաւուել ժողովրդավարութեան մէջ, դառնալ ժողովրդավար երկիր: Յաջորդ տարբերութիւնը արաբական գարնան համեմատութեամբ այն է, որ գինուած ուժերը ներգրաւուած չեն:

- Թուրքական մամուլը այս օրերին Գեգի հրապարակի համար պայքարի հետեւում փորձեց արեւմտեան ուժերի «ակամօքները» տեսնել: Դուք ի՞նչ տպաւորութիւն ունեք:

- Սա հին փաստարկ է: Անշուշտ, Արեւմուտքը կամ Միացեալ Նահանգներն ինչ-որ ձեւով ներգրաւուած են, քանի որ ընդհանրապէս աշխարհի համակարգն իրենք են կարգաւորում, բայց իրենք չեն կարող այս ամբողջ խնդրի հիմնական պատճառը լինել:

- Մաշտոցի պուրակը, որի հարեւանութեամբ նստած ենք, մէկ տարի առաջ ազատագրուեց կրպակներից, հանրային տարածքի պաշտպանութեան համար հազարաւոր մարդիկ դուրս եկան եւ յարթեցին օլիգարխիային: Կարող ենք ասել, որ հենց այս զիտակցութեամբ է թուրք

հանրութիւնը դուրս եկել հրապարակ:

- Անշուշտ, հենց այդ նոյն քաղաքացիական զիտակցութիւնն է թուրքիայում, մարդիկ վճռական են եւ կանգ չեն առնելու:

- Երդողանը յայտարարեց, որ այդու շինարարութիւնը շարունակուելու է, հնարաւոր է համընդհանուր ցասում սկսուի թուրքիայում: Օրերս նաեւ երեսուցորս բլոգերի բռնեցին՝ Ֆեյսբուքի եւ Թուիթերի միջոցով ցուցեր կազմակերպելու կասկածանքով:

- Իրականում սկզբում փորձում էին հարցը քաղաքականացնել, յատկապէս երբ այդ օրերին էրդողանը բացակայում էր երկրից, բայց յետոյ հասկացան, որ սա ուղղակի քաղաքականացնել հնարաւոր չէ, հասարակութեան բոլոր շերտերի ներկայացուցիչները մէկ խնդրի շուրջ են հաւաքուել եւ մէկ հովանոցի տակ են գտնուում, եւ մի կողմ թողած բոլոր քաղաքական խնդիրները՝ միեւնոյն խնդրի լուծման համար են պայքարում: Յիշո՞ւմ էք, ցուցերի չորրորդ օրը էրդողանը յայտարարեց, որ ցուցերին չորս-հինգ հոգի CAPULCU (անօթեւան) են մասնակցում, եւ մարդիկ այդ անունը սոցցանցերում սկսեցին իրենց անուան փոխարէն գրել, եւ պարզուեց, որ հարիւր-հազարաւոր մարդիկ են միացած պայքարին՝ արուեստագէտներ աշխարհի տարբեր ծայրերից:

-Արդէն երեք տարի է՝ թուրքիայում նման «պայքարիկներ» կան, եւ եթէ նախկինում խանութի, հինգ աստղանի հիւրանոցի տէրերը փակում էին իրենց շինութիւնները, որ ցուցարարներ չմտնէին, այս անգամ հակառակը տեղի ունեցաւ. Նրանք բացել են խանութները, փակում էին դռները ոստիկանութեան առաջ, այսինքն՝ բոլորն են ներգրաւուած:

- Պետական ապարատը հնարաւոր է ճեղքուած ք տա: Արդէն իսկ կառավարութեան

մէջ ինչ-որ ճեղքեր են առաջանում, որոշ մարդիկ լաւ ուստիկանի դեր են խաղում, որոշ մարդիկ վատ ուստիկանի դեր են խաղում, նկատուում է այդ ճեղքերն ամենուր: Հիմա ցուցարարները մի փոքր դադար են վերցրել, քանի որ պայթուցիկները վերջացել են, նոր պայթուցիկներ կը ներմուծեն Ֆրանսիայից, կը ներմուծեն, որ նորից սկսեն յարձակումը: Այս պայքարի գնահատականը շատ նման է «Գրաւիր Ուուլ-Սթրիթը» պայքարին, երբ մարդիկ ֆէյսբուք սոցիալական ցանցի միջոցով ցուց էին տալիս՝ ինչ է կատարուում, եւ այն, ինչ մեզիան չի ցուցադրում, մարդիկ ֆէյսբուքի միջոցով են անում:

- Քաղաքացիական հասարակութիւնը ձեւաւորում է թէ թուրքիայում, թէ Ռուսաստանում: Կոնքրետ հնարաւոր է որ հենց այս հասարակութիւնները լուծեն:

-Շատ լաւ կը լինի, որ գան այդ զիտակցութեանը: Առհասարակ, եթէ խնդիր թողնեն երկու հասարակութիւններին, այդ ժամանակ խնդիրը շատ աւելի արագ կը լուծուի:

- Գիտեմ, որ այստեղ ազգայնականութիւնը էք ուսումնասիրում համեմատելով թուրքիայի ազգայնականութեան հետ: Ի՞նչ առանձնաշատութիւններ էք առանձնացրել:


- Այս մէկ շաբաթուայ ընթացքում հարիւրաւոր մարդկանց հետ եմ հաղորդակցուել: Թուրք-իայում մարդիկ ունեն կորցրած պատմութիւն, այսինքն՝ շատ մարդիկ իսկապէս չգիտեն՝ ինչ բան է ցեղասպանութիւնը, եւ եթէ իրենք չէին սպաննի որեւէ մեկին նրա համար, որ նա հայ է, ապա ինչո՞ւ իրենց պապը դա պէտք է անի: Հարիւր տարի շարունակ կառավարութիւնը փորձել է այն թաքցնել: Իսկ Հայաստանում չգիտեն, որ թուրքերը չգիտեն ճշմարտութիւնը: Ես ուզում եմ լուծել խնդիրը, դու ուզում ես լուծել խնդիրը, եւ մենք միասին պէտք է հաղորդակցուենք, հասկանանք? որտեղ է խնդիրը:

դակցուենք, հասկանանք? որտեղ է խնդիրը:

Այստեղ փորձում էի հանդիպել հայ ազգայնականների հետ: Թուրքիայում ազգայնականութիւնը փոքրամասնութիւնների հետ է դիտարկուում, իսկ այստեղ ազգայնականութիւնը չի կարող փոքրամասնութիւնների հետ դիտարկուել, քանի որ այստեղ փոքրամասնութիւններ գրեթէ չկան: Իմ խնդիրն էր պարզել՝ հայ ազգայնականներն ինչին են դէմ, միայն թուրք-իայի՞, թէ՞ ...ու հասկացել եմ, որ ոչ միայն թուրքիայի, բայց դա իմ վաւերագրական ֆիլմի թեման է, այն վերաբերում է ասիմիլացիայի խնդիրներին: Ազգայնականների հետ հանդիպեցի, ներողութիւն խնդրեցի: Էմոցիոնալ տեսնակիւնից խնդրեց հնարաւոր է լուծուի, փոխադարձ հաղորդակցում է պէտք հարցի լուծման համար: Ապացուցուած է, որ մէկ վաւերագրական ֆիլմով չես կարող ստիպել, որ թուրքերն ընդունեն ցեղասպանութիւնը, որովհետեւ հարիւրաւոր ֆիլմեր կան նկարահանուած, հազարաւոր գրքեր, բայց կարելու է թուրքերը հասկանան վիշտը, երբ հասկանան, այդ ժամանակ կը հասկանան այն խնդիրները, որոնք կապուած են դրա հետ: Թուրքերը չեն հասկանում, որ ցեղասպանութեան պատճառով իրենք էլ են շատ բան կորցրել, որովհետեւ օրերս գորգերի թանգարան գնացի, որտեղ հայկական գորգեր տեսայ, որ Անատոլիայում հայկական մշակույթը կորսուել է ցեղասպանութեան ընթացքում, որ եթէ երկու մշակույթները միաւորուէին, ապա կը դեկավարէին աշխարհը:

- Մի պահ պատկերացնեմք, եթէ վաղը թուրքիան ընդունի հայոց ցեղասպանութիւնը, ի՞նչ կը լինի հետ երկու հասարակութիւնների կեանքում դրանից յետոյ:

- Յստակ է, որ երկու հասարակութիւններն էլ խաղաղութեան կարիք ունեն, երբ լինի խաղաղութիւն, հարցը ինքնին կը լուծուի:



ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Հովանուորութեամբ
Գեորգի Ս. ՅՈՒՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ

Մասնակցութեամբ
ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻ
Հանդիսութիւն

Բազմալատակ Կրթական Մշակ Տիար ԵՐՈՒԱՆԻ ՊԱՊԱՅՅԵԱՆԻ

Կիրակի, Յունիս 16, 2013

Սրբոց Դեանդեանց Մայր Տաճարին մէջ
լինի նա Ս. Պատարագին պիտի ընթերցուի

ԳՐԵԳՈՒ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԿՈՍՈՒ ՕՐՉՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

Պատարագի տարալին
Պաշտօնական Հանդիսութիւն ժամը 1:00-ին
Օրուան Բանախօս՝

Տոբթ. Սիմոն Սիմոնեան

Աւազնուորդարանի ԶՕՐԱՅԵԱՆ Թանգարանի
Սիրույի հոսէր բոլորին

3325 N. Glenoaks, Blvd., Burbank, CA 91504

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Fax: -----

ՀԱՅՐԵՆԱԼՔՈՒՄ

ԱՒԵՏԻՍՌԱԶՄԻԿ

Խորհրդային Հայաստանի կազմութենէն ետք, տարբեր հանգրուաններու եւ յատկապէս 1945-47 թուականներուն սփիւռքէն դէպի Հայաստան հոսքը կը բնութագրուէր երկու բառերով՝ ներգաղթ կամ հայրենադարձութիւն:

Վերջերս կը լսէի հին հարցազրոյց մը Լիբանանէն հայրենադարձուած հանգուցեալ արուեստագէտ Տիգրան Լեւոնեանի հետ. երբ հարց տրուեցաւ արտագաղթի նկատմամբ իր կեցուածքին շուրջ, ան պատասխանեց՝ «միանշանակ վատ», մասնութեան եզրեր տեսնելով հիւանդ մօր մը լքող որդիին եւ հայրենիքը լքող եւ արտասահման փոխադրուող մարդոց միջեւ. ան ընդձեռնեց, որ անոնք ոչ թէ կ'երթան, այլ կը լքեն հայրենիքը... երեւոյթին մէջ ներդնելով զգացականութեան, երախտամոռութեան եւ դատապարտելի անտարբերութեան երանգներ:

Իրօք, ներգաղթին որպէս հակահիշ կը գործածենք արտագաղթ բառը. իսկ հայրենադարձութեան որպէս հակահիշ ինչո՞ւ չգործածենք հայրենալքում բառը, որ ըստ իս աւելի հնչեղ եւ դիպուկ արտայայտչաձեւ է՝ ողջ իրականութիւնը պարզող:

Արդարեւ, արտագաղթը կ'ըլլայ երկրէ մը այլ երկիր. օրինակ՝ ես իմ ծննդավայրէս՝ Լիբանանէն արտագաղթեցի նոր բնակավայր մը՝ Կիպրոս: Լիբանանահայեր արտագաղթեցին ԱՄՆ: Պարզ է, ներգաղթը հակառակ ուղղութեամբ կ'ընթանայ: Մինչդեռ՝ Հայկը, Արմէնը, Արսէնճիքը Հայաստանը հայրենալքելով հաստատուեցան ԱՄՆ, Սպանիա կամ Հոլանտա: Տարբերութիւնը երկու եզրերուն միջեւ խորքային է եւ բովանդակային: Ուստի, պիտի առաջարկէի մեր յօդուածագիրներուն, facebook-եան գրառողներուն, մտաւորականներուն եւ մամուլոյ աշխատակիցներուն յետադու չգրեն Հայաստանէն հայոց արտագաղթ, այլ՝ հայրենալքում... ինչպէս անցեալին՝ հայրենադարձութիւն:

Այս օրերուն շատ կը խօսուի եւ կը գրուի հայրենալքումի մասին, որ հասած է վտանգաւոր չափանիշներու՝ սպառնալով նոյնիսկ Հայաստանի ազգային անվտանգութեան: Վերջերս, վիճակագրութիւն մը կը նշէր, որ Հայաստանի բնակչութեան 40 առ հարիւրը պատրաստ է հայրենալքելու՝ եթէ հնարաւորութիւն ընձեռնուի: Կը

կարծեմ, որ սա ազգային աղէտ է, Մեծ Եղեռնը կրկնօրինակող. «Հայաստանը առանց հայու» լոզունգը իրողութիւն դարձնող:

Այս օրերուն, երբ խօսքը ըլլայ Հայաստանէն անգաղթի արտահոսքի մասին, մեղադրական սլաքները ընդհանրապէս կ'ուղղուին Հայաստանի իշխանութիւններու հասցէին: Շատեր այս երեւոյթին պատասխանատուութիւնը կը բեռնեն Հայաստանի վարիչներու ուսերուն: Յօդուածագիր մը կը նշաւակէ գոյգ Սարգսեանները (Մերժ եւ Տիգրան), որպէս Հայաստանի դատարկումին մեղսակիցներ եւ պատասխանատուներ:

Բայց արդե՞ք միայն գոյգ Սարգսեանները տեղադրել ամբաստանելի ակտներուն:

Յիշենք մօտիկ անցեալը. խորհրդային օրերուն երբ Հայաստան կ'ուսանէինք, ժողովուրդին կարեւոր տոկոսը կը ձգտէր ճեղքելով «երկաթէ վարագոյր»ը՝ հաստատուիլ մասնաւանդ ԱՄՆ: Արեւմտեան քարոզչական մեքենան եւ ԱՆՁԱ կազմակերպութիւնը, ինչպիսի՜ ստոր ոգիով կը գայթակղեցնէին մեր հայրենակիցները՝ լքելու իւ. Հայաստանը: Ի մասնաւորի հայրենադարձներ, կարօտով կը յիշին արտերկրի օրերը եւ զանազան միջոցներով կը փորձէին լքել իւ. Հայաստանը: Այդ օրերուն, ի հարկէ Սարգսեանները չկային: Այդ օրերուն կային

զգալի արտադրական հակադրական խօսակցական հակադրութիւններ՝ Յուրտ Պատերազմի ազդեցութեամբ եւ ԱՄՆ իր արբանեակներով ոգի ի բռին ինչպէ՞ս բնաւ քնքեր կը հիւսէր Խորհրդային Միութեան դէմ, ապա ինչպէ՞ս բացատրել յետ-խորհրդային արտահոսքին երեւոյթը: Եթէ անցեալին, սփիւռքահայ ուսանողներ յարմարագոյն փեսացուներ էին հայրենալքումի տրամադիր հարսնցուններու համար, ապա իւ. Միութեան տարբադրումէն եւ չքացումէն ետք, այդ հանգամանքն ալ փոխուեցաւ, քանի հայրենալքումը եղաւ գրեթէ հնարաւոր համարեա բոլորին համար, որոնք կը ցանկան հաստատուիլ արտասահման: Կիպրոս հաստատուած հայրենալքողներուն մեծ մասը կղզի ժամանած է 1992-1994 թուականներուն, այսինքն՝ Լեւոն Տէր Պետրոսեանի օրերուն: Ռոպէր Քոչարեանի նախագահութեան օրերուն եւս ընթացքը նոյնն էր: Սարգսեաններու ժամանակահատուածը տրամաբանական եւ յուսահատ շարունակումն է հայրենալքումի գործընթացին: Հետեւաբար, հայրենա-

լքումը այսօրուան հարց չէ, այլ՝ խորհրդային օրերէն ձեռնադրակի նման ծաւալող ախտ մը՝ դեռեւս դարմանի կարօտ:

Իսկութեան մէջ այս հարցը ունի շատ աւելի խոր արմատներ, քան այսօրուան ընկերային-տնտեսական պայմանները կամ Հայաստանի մէջ օրէնքի եւ իրաւունքի չզոյլութեան յաճախ առաջ քաշուող փաստարկները:

Սփիւռքահայ ամենաբեղուն գրչի տէր պատմա բանը Արշակ Ալպոյաճեանն է անտարակոյս, ան նախ Պոլսոյ եւ ապա Փահիրէի մէջ արտադրած է բազմաթիւ պատմագիտական լուրջ եւ փորեղ հատորներ. կատարած է բազմահատորեայ ուսումնասիրութիւններ, անոնց շարքին է «Պատմութիւն Հայ Գաղթականութեան. Հայերու Յրուուումը Աշխարհի Զանազան Մասերը» բազմահատորեակը: 1941-ին հրատարակուած Ա. Հատորը կը նշէ. «Քրիստոսէ Առաջ Զ. Դարէն Մինչեւ ԺԱ. Դար Քրիստոսի»: Այսինքն՝ հայերը հայրենալքումը սկսած են Մեծն Տիգրանի օրերէն շատ առաջ...:

Արդէն սկսած եմ կասկածիլ հայ մարդուն իր հողին հանդէպ ունեցած կառչածութեան, սիրոյն կամ հայրենասիրութեան վրայ: Երբ ակնարկ մը նետենք մեր պատմութեան երկայնքին՝ կը տեսնենք յարատեւ հոսք մը դէպի արտերկիր, օտար ու հեռաւոր ափեր: Պատմաբան Ա. Ալպոյաճեան կը գրէ. «Հնօրեայ պատկերն է ան մշտանորոգ եւ ամէն օր այլազան երանգներով ճոխացած, այնպէս որ մարդ կը տարուի մտածել թէ անիկա ճակատագրական է այս ազգին համար: Արդարեւ, հնագոյն ժամանակներէ սկսեալ բազմաթիւ հայեր, գունդագունդ լքած են իրենց երկիրը եւ հեռացած՝ անկէ, այլուր փնտուելու համար հանգիստ ու անդորր կեանք մը, ինչ որ չէին կրցած գտնել ղժբախտաբար իրենց հայրենիքին մէջ, որ շատ քիչ ունեցած է անդորրութեան,

խաղաղութեան եւ բարգաւաճութեան երջանիկ ժամանակամիջոցներ, իր պատմութիւնը շրջապուած շարք մը ըլլալով ներքին ու արտաքին պատերազմներու, բարբարոս ցեղերու խուժումին, սրածութեանց, կոտորածներու, եւ այս կարգի շարք մը ղժբախտութիւններու, որոնցմէ խոյս տալու համար իր բնակիչներէն շատեր նախընտրած են հեռանալ իրենց հայրենիքէն եւ ցրուած՝ մօտաւոր կամ հեռաւոր երկիրներ, առժամեայ կամ մնայուն բնակութիւն հաստատելու առաջադրութեամբ եւ գրեթէ երկրագունդին բոլոր մասերուն մէջ տարածուած»:

Հետաքրքիր է նկատել, որ միշտ ալ պատճառաբանութիւն մը կայ հայրենալքումը չբեղող: Մեծ Եղեռնէն առաջ օսմանցիին պարտադրած հարկերն ու ճնշիչ տուրքերն էին, քիւրտին արտօնուած ասպատակութիւններն ու պարսիկին հալածանքները. աւելի ուշ՝ պատրուակ դարձան խորհրդային կարգերը, ապա՝ Լեւոն Տէր Պետրոսեանի, Ռոպէր Քոչարեանի, Մերժ եւ Տիգրան Սարգսեաններուն անունները: Հայաստանի խորհրդարանական եւ ապա նախագահական ընտրութիւններէն ետք, անոնք որոնք ղժբոհ մնացին անոնց արդիւնքներէն, այսինքն՝ չտեսան իրենց նախընտրած թեկնածուին յաջողութիւնը, որպէս բողոքի արտայայտութիւն հրապարակաւ յայտարարեցին թէ՛ յուսախաբ իրավիճակէն «ուզում եմ գնալ Հայաստանից»: Մի գուցէ շատեր երթան թուրքիա, որպէս Հայաստանէն աւելի տանելի պայմաններով երկիր, ինչպէս որ արդէն շատեր համոզուած են ու հաստատուած:

Ո՞ւր մնացին հայրենասիրական մեր ճառերը՝ երբ իւրաքանչիւր փոքր պատրուակի՝ կը լքենք հայրենիքը:

Քանիսէ՞ր կը մտածեն՝ փոխանակ սփիւռքի մէջ հայրենաբաղձ ապրելու՝ ըլլան հայրենադարձ:

OFFICE SPACE FOR RENT

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

NEW YORK LIFE **Anthem** **BlueShield** **Aetna** **Health Net** **CIGNA** **KAISER PERMANENTE**

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը ԱՕհրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԳԱՅԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՆՈՐՇՆՏԻՐ ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ



Հայ Երուսաղէմի 97րդ գահակալ՝ Ամենապատուելի Տ. Նուրհան Պատրիարք Հայրը 4 Յունիսին, 2013, Երեքշաբթի երեկոյեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մէջ կատարուած հանդիսութեամբ ստացաւ Պատրիարքական ասան եւ բարձրացաւ Սրբոց Յակոբեանց Առաքելոց Սուրբ Աթոռը: Հանդիսութեանց յանուն Պոլսոյ Պատրիարքական Աթոռոց մասնակցեցան Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ՝ Բարձր. Տ. Արամ Արքեպս. Աթէշեան, Միջկեղեցական եւ Միջկրօնական յարաբերութեանց վարիչ՝ Գերշ. Տ. Սահակ Եպս. Մաշալեան եւ Հրատարակութեանց եւ Տեղեկատուական բաժնի վարիչ՝ Բրշ. Վաղարշակ Սրկ. Սերովբեան:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑ ԱՄԵՆ.

Տ. ՆՈՒՐ ՀԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
Պատուերակութիւնը, 4 Յունիս 2013, Երեքշաբթի առաւօտ, ժամը 10.00-ին այցելեց Սրբոց Յակոբեանց Մայրավանք եւ իր առժամեայ պաշտօնարանին մէջ ընդունուեցաւ Ամեն.Տ. Նուրհան Պատրիարքի կողմէ: Մտերմիկ գրոյցի ընթացքին Նորին Ամենապատուութիւնը իր ուրախութիւնը յայտնեց Պոլսոյ Աթոռի այսպիսի պատուերակութեամբ մը մասնակցութեան համար: Արամ Սրբազան անգամ մը եւս շնորհաւորեց նորընտիր Պատրիարք Սրբազան Հայրը եւ իր ուրախութիւնը յայտնեց որ այս ուրախ առթիւ Երուսաղէմ կը գտնուէր բաժնելու համար Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուրախութիւնը:

ՀԻՒՐԵՐՈՒ ԺԱՄԱՆՈՒՄ

Գահակալութեան հանդիսութեան մասնակցելու նպատակաւ ժամանած էին բացի Պոլսոյ Պատրիարքական Աթոռոց պատուերակութեանէ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Կիպրոսի Գերշ. Տ. Վարուժան Արքեպիսկոպոսը, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմէն Գերշ. Տ. Խաթակ Արքեպիսկոպոսը եւ Ուաշինկթըն Տի. Սիէն Գերշ. Տ. Վիգէն Արքեպիսկոպոսը: Հասան նաեւ Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Գերշ. Տ. Նաթան Արքեպիսկոպոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան անդամներէն՝ Թեոֆանի Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգսեան, Լոնտոնի Գերշ. Տ. Վահան Եպիսկոպոսը:

ՈՒՆՏԻ ԱՅՑ ՍՈՒՐԲ ԳԵՐՇՄԱՆ
Արամ Սրբազան եւ ընկերա-

կիցները Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր այցելելէ յետոյ, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Նաթան Արքեպս. Յովհաննիսեանի այցելեցին Սուրբ Յարութեան Տաճարը: Բարձր. Տ. Արամ, Գերշ. Տ. Նաթան եւ Գերշ. Տ. Սահակ Սրբազաններն ու Բրշ. Վաղարշակ Սրկ. Տեսչարանին մէջ տեղւոյն միաբաններուն հետ գրուեցելէ յետոյ, մտան Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Գերեզմանը ուր կատարեցին իրենց ուխտի աղօթքը: Անոնք այցելեցին նաեւ Գիւտ Խաչի վայրը, Յովսէփ Արեմաթացիի գերեզմանը, զանազան սրբավայրեր, ապա վերադարձան Սրբոց Յակոբեանց Մայրավանք եւ միաբանական սեղանատան մէջ ճաշեցին:

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ


Նոյն օրը, 4 Յունիս 2013, Երեքշաբթի, ժամը 4:00ին Պատրիարքարանէն սկսաւ Ասայի տուչութեան եւ գահակալութեան հանդիսութիւնը: Հոգեւորականներու երկար թափօր մը Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Հայրը շարականներու երգակցութեամբ, խունկ ու մոմով Ս. Յակոբեանց Մայր Տաճար առաջնորդուեց, ուր Երուսաղէմի բոլոր եկեղեցիներու ներկայացուցիչները, միջկրօնական եւ պետական ներկայացուցիչներ, արտասահմանէն ժամանած հիւրեր եւ Երուսաղէմի ժողովուրդը կը սպասէին: Այստեղ՝ Սուրբ Յակոբ Գլխադրի մատրան մէջ կատարուեցաւ կարճ Աղօթասացութիւն, ապա փոքր ատենի մէջ կատարուեցաւ սարմուսասացութիւն:

Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Գերշ. Տ. Նաթան Արքեպիսկոպոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Կիպրոսի Գերշ. Տ. Վարուժան Արքեպիսկոպոսը, Սուրբ Երուսաղէմի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս, Պոլսոյ Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ՝ Արամ Սրբազան, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Գերշ. Տ. Խաթակ Արքեպիսկոպոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան անդամներէն՝ Թեոֆանի Գերշ. Տ. Սեպուհ Արք., Ուաշինկթընի Գերշ. Տ. Վիգէն Արք., Լոնտոնի Գերշ. Տ. Վահան Եպս. միասնաբար բեմ առաջնորդեցին Սրբազան Պատրիարք Հայրը:

Յանուն Հայ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան՝ ուղերձ մը կարգաց Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս եւ անգամ մը եւս յայտնելով իր ուրախութիւնը Նորին Ամենապատուութեան ընտրութեան առթիւ, ըսաւ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՇԵՐԻՖ ԼԻ ՊԱՔԱՅԻ

Լոս Անճելոսի գաւառի Շէրիֆ Լի Պաքայի բարեկամները Յունիսի 9ին, 2013, Պըրպէնքի «Ամպրոգիա» ճաշարանին մէջ, պաշտօնական ճաշկերոյթով մը պատուեցին զինք: Այդ օրը կը գուգադիպէր նաեւ Շէրիֆի ծննդեան տարեդարձին: Այս առթիւ ելոյթներ ունեցան տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ, որոնք բարձր գնահատեցին Լի Պաքայի ճիգերը շրջանի անվտանգութեան եւ բնակչութեան անդորրութեան ու խաղաղ գոյակեցութեան պահպանման շուրջ: Իր հերթին դրուատալից խօսքերով հանդէս եկաւ Միջ-ի արտաքին յարաբերութեանց դիւանի ներկայացուցիչ ընկ. Թադէոս Քէօրօղլեան, շեշտելով Լի Պաքայի օգտակար ծառայութիւնը շրջանի հաջութեան եւ յատուկ յուշատախտակով մը պատուեց զինք:



Միջ-ի ներկայացուցիչ ընկ. Թադէոս Քէօրօղլեան եւ Շէրիֆ Լի Պաքա

Երեկոյթի վերջաւորութեան շնորհակալական ելոյթով հանդէս եկաւ Շէրիֆ Լի Պաքան:

որ սոյն ընտրութիւնը կոչ մըն է, արժանի ժառանգորդը դառնալու նախահայրերու, բազմերով նուիրական սոյն Սուրբ Աթոռին վրայ, ծառայութեամբ եւ հաւատքի անխախտ նուիրումով առաւել եւս պայծառացնելու համար զայն:

Սրբազան Հայրը ուղերձէն յետոյ, Նուրհան Պատրիարք Հօր յանձնեց Պատրիարքական պատմական Ասան:

Ապա Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Հայրը ծոնկի գալով կարգաց իր ուխտը, ըստ հետեւեալին. «Խոստանամ եւ ուխտեմ առաջի Աստուծոյ եւ Սրբոց Սեղանոյս, խղճի մտօք եւ հաւատարմութեամբ առնել գոր-

ծաղրութիւն կարգաց, կանոնաց եւ աւանդութեանց Միաբանութեան Առաքելական Աթոռոյս Սրբոց Յակոբեանց, այլեւ հաւատարմութեամբ եւ աշխրջութեամբ հսկել պահպանութեան Հայկական իրաւանց ի Սուրբ Տեղիս: Ուխտեմ լինել հաւատարիմ կանոնաց եւ աւանդութեանց Հայաստանեայց Առաքելական եւ Ուղղափառ Սուրբ Եկեղեցոյ եւ ճանաչել գհոգեւոր իշխանութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ընկալցի Տէր գուխտս մեր, այց արասցէ եւ օգնեսցէ մեզ

Շար.ը էջ 19

ՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ
GREEK NIGHT

FEATURING
THE BOUZOUKI TRIO



Կապիկապոբեանք՝
ԿԼԵՆՏԵՅԼԻ
ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱՃԻՒՐԻ

Շարաք, 22 Յունիս 2013

Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

<Մ.Մ.Մ.՝ի «Կարօ Սոդակապեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

❖❖❖

ՄՈՒՏՔԻ ՆՈՒԵՐ՝ \$35.00
ՏՈՒՄԵՐՈՒ <ԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
ԱՎՕ ՄԱՁՄԱՆԵԱՆԻՆ (818) 913-9311
կամ ԿԱՐՕ ՊԵՐԱՐԵԱՆԻՆ (818) 913-4024

Massis Weekly

Volume 33, No. 22

Saturday, June 15, 2013

New Meeting Between Armenian and Azerbaijani Presidents Planned



Aliyev Medvedev and Sarkisian

BAKU — The Foreign Ministers of Azerbaijan and Armenia are to meet later in June to discuss preparations for the meeting of the presidents of the two countries, Azerbaijani Foreign Minister Elmar Mammadyarov told reporters, Trend agency reports.

Mammadyarov made the announcement one week after he and Nalbandian held separate talks with U.S. Secretary of State John Kerry in Washington. The Azerbaijani minister went on to meet with U.S., Russian and French diplomats co-chairing the OSCE Minsk Group in London.

“The purpose of the presidential meeting is the discussion of the serious issues of the Nagorno-Karabakh conflict. I look forward to meeting with Armenian Foreign Minister Edward Nalbandian to comprehensively discuss the preparation for the presidents’ meeting,” the Minister added.

The three mediators visited Baku and Yerevan late last month. They said they are now “working intensively”

with the conflicting parties to organize a face-to-face meeting of the Armenian and Azerbaijani presidents.

“The mediators are continuing to prepare for a meeting of the presidents of Armenia and Azerbaijan,” Regnum quoted Mammadyarov as telling journalists in Baku. “But we want it to be substantive and not for the sake of a meeting.”

Presidents Ilham Aliyev and Serzh Sarkisian most recently met in the Russian city of Sochi in January 2012. The talks were hosted by then Russian President Dmitry Medvedev. In a joint written statement issued there, Aliyev and Sarkisian pledged to intensify their efforts to agree on the Basic Principles of a Karabakh settlement put forward by the mediators.

However, the conflicting parties have since made no progress towards bridging their differences on the proposed peace accord. “It is critical that all the parties ... try to find a way to help break the impasse,” Kerry told Nalbandian last week.

US Supreme Court Denies Review of Armenian Genocide Insurance Claims

Rep. Schiff: Supreme Court Decision “Deeply Disappointing”

WASHINGTON, DC – The US Supreme Court today denied lead plaintiff Harry Arzoumanian’s petition for review of a 9th Circuit Court ruling, in the case of Arzoumanian vs. Munich-Re.

Arzoumanian and other plaintiffs including Garo Ayaltin, Miran Khagerian and Ara Khajerian brought claims against Munich-Re for unpaid insurance claims arising out of the Armenian Genocide of 1915.

The lawsuit was first filed by attorney Vartkes Yeghiayan in 2003 and moved through various levels of the appeals process reaching the highest court of law, the US Supreme Court.

The lower court interpreted the California law that allows heirs of genocide survivors to file suit against insurance companies and other entities as an intrusion upon the federal government’s right to conduct foreign relations. The 9th Circuit Court questioned the motives of the California legislature and issued its ruling on the basis of it being preempted by the rights conferred upon the federal government. Petitioners Igor Timofeyev, Lee Boyd, Michael Bazylar, Rajika Shah and Vartkes Yeghiayan were arguing that the issue at hand was one of State powers and that this decision was a clear over-reach of the Federal government upon the State legislature.

Rep. Adam Schiff (D-CA) called the court’s decision “Deeply Disappointing” in a statement issued on Tuesday.

“The Supreme Court’s decision



to decline to hear arguments in *Movsesian v. Versicherung AG* is deeply disappointing, both because of the urgent need to secure justice for the victims of the Armenian Genocide and their survivors, and the important constitutional issues at stake. As a State Senator, I was a principal co-sponsor of the bill which extended the statute of limitations on such claims, and I feel a compelling personal interest in maintaining access to justice for victims of genocide.

“Prior to the court’s recent decision, I drafted legislation to make it clear that it is the policy of the United States to assist the victims of genocide, whether the Armenian genocide or any other atrocity, in pursuing claims for redress. The federal government should be encouraging states to provide a venue for the victims of genocide, not impeding legal claims. With today’s decision, such legislation is all the more essential and I will be working with the community to put the final touches on the bill prior to its introduction.”


Soccer:

Armenia Rout Denmark 4-0 in World Cup qualifier

COPENHAGEN -- In the Group B World Cup qualifying game of the European zone, the Armenian national football team defeated the national team of Denmark in Copenhagen. The game started with a goal within the first minute from the Armenian side scored by the best striker of Russian championship league of this season Yura Movsisyan. 18 minutes later another footballer playing in Russia Aras Ozbilis scored the second goal for Armenia.

In the second half Yura Movsisyan scored his second goal, and the last goal was scored by the best striker of Ukrainian championship league Henrikh Mkhitaryan.

This is the second victory gained by Armenia in the current



qualifying campaign, allowing Vardan Minasyan’s side to catch up with the Danes in fourth place of the six-nation group.

Next, Armenia will play the Czech Republic in Prague on September 6.

Italy currently tops group B with 14 points, Armenia and Denmark have 6 points sharing 4-5 positions respectively.

U.S. Geological Survey Studying Shale Gas Resources in Armenia

YEREVAN --The U.S. Geological Survey (USGS) began a study of Armenia’s shale gas resources in 2011. The survey is on-going and is expected to be finalized late this year, or early next year.

“The US Geological Survey was here and did some work last year, and they are working on an analysis now in Washington. When we get that analysis this year we will share it with the Armenian government and the public,” U.S. Ambassador to Armenia John A. Heffern stated.

On June 2 2011 a memorandum

of understanding was signed between the Ministry of Energy and National resources of the Republic of Armenia and U.S. State Department on cooperation in spheres of estimation and description of traditional and nontraditional energy resources of Armenia.

